# ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՊՄՀ

## ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2023

# ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԹԵՍՏ 2

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

*Հարգելի՛ ուսուցիչ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

***Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:***

**1** **Սովորողի ստեղծագործական գործունեության ձևավորման առաջնային պայմաններից է**

1. Արտադասարանական պարապմունքը
2. Խիստ կարգապահությունը
3. Դասընկերոջ ախատանքի օրինակը
4. Հուզազգայական մթնոլորտը

**2** **Որ արվեստագետն է համարվում Վաղ վերածնդի ժամանակաշրջանի ներկայացուցիչ**

1. Պաոլո Վերոնեզե
2. Ջոտտո դի Բոնդոնե
3. Սանդրո Բոտիչելլի
4. Լեոնարդո դա Վինչի

**3** **Մանկավարժական փորձը վերաբերում է**

1. Չափորոշիչային պահանջներին
2. Դիդակտիկ սկզբունքներին
3. Հետազոտության մեթոդներին
4. Ուսումնական նպատակներին

**4** **Ֆրանսիացի որ նկարիչը համարվեց կետանկարչության (պուանտելիզմ) հիմնադիրը**

1. Մորիս Դենի
2. Կլոդ Մոնե
3. Էդգար Դեգա
4. Ժորժ Սյորա

**5** **Հովնաթանյան նկարչական գերդաստանի որ ներկայացուցիչն է պատկերել Եփրեմ կաթողիկոսի դիմանկարը**

1. Հակոբ Հովնաթանյան (1806-1881)
2. Նաղաշ Հովնաթան (1661-1722)
3. Հովնաթան Հովնաթանյան (1725-1799)
4. Աղաթոն Հովնաթանյան (1816-1893)

**6** **Կերպարվեստի հիմնական արտահայտչամիջոց են հանդիսանում**

1. Հեռանկարը, կրճատումը
2. Գուաշը, մատիտը, պաստելը
3. Գիծը, կետը, գույնը
4. Համաչափությունը, կառուցվածքը

**7** **Որն է համարվում թեմատիկ հորինվածքի հիմնական տարր**

1. Աշխատանքի կոլորիտը
2. Աշխատանքի չափը
3. Աշխատանքային նյութը
4. Աշխատանքի կոմպոզիցիան

**8** **Նշվածներից հայկական որ եկեղեցին է համարվում բազիլիկ**

1. Տեկոր
2. Կարմրավոր
3. Խորանաշատ
4. Զվարթնոց

**9** **Որն է համարվում Երևանի առաջին արձանը**

1. Ներսոն Ստեփանյան
2. Խաչատուր Աբովյան
3. Ղուկաս Ղուկասյան
4. Ստեփան Շահումյան

**10** **Ով է Երևան քաղաքի առաջին արձանի հեղինակը**

1. Սերգեյ Մերկուրով
2. Հովհաննես Բեջանյան
3. Այծեմիկ Ուրարտու
4. Անդրեաս Տեր-Մարուքյան

**11** **Ով է առաջին անգամ շրջանառության մեջ դրել Հելլենիզմ տերմինը**

1. Ալեքսանդր Մակեդոնացի
2. Բորիս Պիոտրովսկի
3. Յոհան Դրոյզեր
4. Ջորջո Վազարի

**12** **Նշվածներից ով է եղել Պոլսի գեղարվեստի ուսումնարանի հիմնադիրներից և նույն ուսումնարանի քանդակի բաժնի ղեկավարը**

1. Էդգար Շահին
2. Հովսեփ Մանաս
3. Երվանդ Ոսկան
4. Հովսեփ Փուշման

**13** **Ով է հանդիսանում նոր շրջանի հայ կերպարվեստում պատմական ժանրի հիմնադիրը**

1. Գևորգ Բաշինջաղյան
2. Փանոս Թերլեմեզյան
3. Վարդգես Սուրենյանց
4. Եղիշե Թադևոսյան

**14** **Որտեղ է գտնվում Հովհաննես Այվազովսկու «Քաոս» ստեղծագործությունը**

1. Վենետիկի Մխիթարյան միաբանության պատկերասրահ
2. Հայաստանի ազգային պատկերասրահ
3. Դրեզդենի պատկերասրահ
4. Թեոդոսիայի Հովհաննես Այվազովսկու անվան պատկերասրահ

**15** **Ով է եղել Գեղարվեստի ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա) հիմնադիրը**

1. Ալեքսանդր Մյասնիկյան
2. Մարտիրոս Սարյան
3. Ասքանազ Մռավյան
4. Արա Սարգսյան

**16** **Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների համակարգ չէ**

1. Բովանդակային համակարգ
2. Գիտելիքների համակարգ
3. Կարողությունների համակարգ
4. Արժեքային համակարգ

**17** **Հելլենիստական շրջանում որ աստծուն է նվիրված եղել Գառնու հեթանոսական տաճարը**

1. Խալդի
2. Արամազդ
3. Վահագն
4. Միհր

**18** **Նշվածներից որը չի համարվում հանրակրթական դպրոցի ուսումնական գործընթացի փուլ**

1. Ավագ
2. Տարրական
3. Միջին
4. Կրտսեր

**19** **Որ աստծուն է նվիրված եղել ուրարտական Մուսասիրի տաճարը**

1. Տուրանի
2. Խալդի
3. Թեյշեբա
4. Շիվինի

**20** **Ով է եղել Հայաստանի առաջին հանրապետության զինանշանի հեղինակը**

1. Փանոս Թերլեմեզյան և Նիկողայոս Մառ
2. Հակոբ Կոջոյան և Ալեքսանդր Թամանյան
3. Մարտիրոս Սարյան և Հակոբ Գյուրջյան
4. Դմիտրի Մերկուրով և Արա Սարգսյան

**21** **Կերպարվեստ առարկայի ծրագրի տվյալ բաժինն ապահովում է գեղարվեստական արտահայտչական միջոցների ընդհանրացված ըմբռնման ձևավորում**

1. Իրականության ստեղծագործական վերարտադրություն
2. Գեղարվեստական պատկերման յուրահատկություններ
3. Արվեստի կոնստրույտիվ տեսակներ և միջոցներ
4. Միջմշակութային հաղորդակցության հմտություններ

**22** **Ինչպիսի հիմնական հմտություններ և կարողություններ են ձևավորվում խմբային աշխատանքի ժամանակ**

1. Ստեղծագործական երևակայության հմտություններ
2. Տարածության արտահայտման հմտություններ
3. Հեռանկարային ընկալման հմտություններ
4. Համագործակցային աշխատանքի հմտություններ

**23** **Ում նկարազարդումներով է հրատարակվել հայկական առաջին տպագիր Աստվածաշունչը**

1. Սանդրո Բոտիչելլի
2. Ալբրեխտ Դյուրեր
3. Էժեն Դելակրուա
4. Շառլ Դյուպուի

**24** **Հայ արվեստագետներից ով է հանդիսանում իմպրեսիոնիստ նկարիչ**

1. Ենոք Նազարյան
2. Ստեփանոս Ներսիսյան
3. Եղիշե Թադևոսյան
4. Մինաս Ավետիսյան

**25** **Հանրակրթական դպրոցում որը չի հանդիսանում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Դիզայնի պատմություն
2. Պատկերում բնօրինակից
3. Թեմատիկ նկարչություն
4. Արվեստի տեսություն

**26** **Որտեղից է ծագել գոբելեն անվանումը**

1. Գոբելեն գույնից
2. Գոբելեն ազգանունից
3. Գոբելեն բնակավայրից
4. Գոբելեն թելատեսակից

**27** **Ինչու են XVII դարի Հոլոնդիայի արվեստագետներին կոչել «Փոքր հոլանդացիներ»**

1. Փոքր բնակավայրերում ապրելու համար
2. Կարճահասակ լինելու համար
3. Փոքրաչափ նկարներ ստեղծելու համար
4. Սակավաթիվ նկարներ ստեղծելու համար

**28** **Հունական ճարտարապետության մեջ որ կերպարներն էին կոչվում Ատլանտներ**

1. Տղամարդկանց այն արձանները, որոնք տեղադրվում էին սյուների փոխարեն և պահում էին շինության ծածկը, պատշգամբը, սյունասրահը
2. Տղամարդկանց այն արձանները, որոնք ունեին առնական կառուցվածք և զարդարում էին շինության տարածքը
3. Այն արձանները, որոնք  զարդարում էին պալատների նախասրահները, և հանդիսանում էին որպես հունական դիցարանի տարբեր աստվածների կերպարներ
4. Տղամարդկանց այն արձանները, որոնք բերվում էին հռոմեական կայսրությունից և տեղադրվում հունական ճարտարապետական կոթողներում՝ վերջինիս տալով հունահռոմեական ճարտարապետական ոճ

**29** **Կերպարվեստի որ տեսակին է պատկանում լինոփորագրությունը**

1. Կոլաժ
2. Հարթաքանդակ
3. Գրաֆիկա
4. Խճանկար

**30** **Կերպարվեստ առարկայից ներկայացվող պահանջների համակարգը բաղկացած է**

1. 8 բաժնից
2. 2 բաժնից
3. 4 բաժնից
4. 6 բաժնից

**31** **Հայազգի որ ճարտարապետն է վերականգնել Կոստանդնուպոլսի (այժմ՝ Ստամբուլ) Սբ. Սոֆիայի տաճարի գմբեթը**

1. Տրդատ
2. Մանուել
3. Մոմիկ
4. Դանիել

**32** **Որ ժամանակաշրջանի արվեստին է բնորոշ քրիստոնեական թեմաները**

1. Անտիկ
2. Ռոկոկո
3. Իմպրեսիոնիզմ
4. Վերածնունդ

**33** **Ինչ է նշանակում «սֆումատո» տերմինը**

1. Աստվածաշնչյան թեմաների պատկերազարդումը միջնադարյան եկեղեցիներում և ձեռագիր մատյաններում
2. Պատկերային ձևերի առանձնահատուկ որակ, մոդելավորման փափկություն, տոնային և ուրվագծերի նուրբ անցումներ, անորոշության, մշուշանման և թափանցիկության տպավորություն
3. Մարդու և բնության կապը ու փոխհարաբերությունը կերպարվեստում
4. Մարդկային դիմանկարի հոգեբանական արտահայտությունը կերպարվեստում

**34** **Որ արվեստագետը չի համարվում սյուրռեալիզմի ներկայացուցիչ**

1. Գուստավ Կլիմտ
2. Ռենե Մագրիտ
3. Անդրե Բրետոն
4. Մաքս Էռնստ

**35** **Որտեղ է գտնվում Լեոնարդո դա Վինչիի «Խորհրդավոր ընթրիք» աշխատանքը**

1. Ֆլորենցիայի Պալացցո Մեդիչի-Ռիկկարդի
2. Վատիկանի քրիստոնեական թանգարան
3. Ֆլորենցիայի Պալացցո Վեկկիո
4. Միլանի Սանտա Մարիա դելլե Գրացիե տաճար

**36** **ԽԻԿ համակարգը կիրառվում է**

1. Ամփոփիչ հաշվետվություն կազմելիս
2. Դասի պլան կոնսպեկտ կազմելիս
3. Տարվա օրացուցային պլան կազմելիս
4. Գնահատման չափանիշներ կազմելիս

**37** **Պատկերում որոշակի կոլորիտի ստեղծումն ապահովվում է**

1. Միմյանց փոխլրացնող գույների շեշտադրմամբ
2. Լրացուցիչ գույների ներդաշնակությամբ
3. Գուներանգային հակադրությունների առկայությամբ
4. Երանգի նկատմամբ գույնի գերակշռությամբ

**38** **Որոնք են ծիածանի գույները**

1. Կարմիր, դեղին, գազարագույն, մանուշակագույն, կանաչ, կապույտ, մոխրագույն
2. Կարմիր, նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն
3. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագուն, մանուշակագույն, փիրուզագույն
4. Կարմիր, վարդագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, սպիտակ

**39** **Կերպարվեստի դասավանդման առաջատար սկզբունք է համարվում**

1. Փորձարարությունը
2. Ջննողականությունը
3. Օպտիմալացումը
4. Նորարարությունը

**40** **Ինչպես է անվանվում գեղանկարչական այն ժանրը, որտեղ նատյուրմորտում բացի տվյալ ժանրին բնորոշ առարկաներից, պատկերված են լինում գանգ, գրքեր, սպանված թռչուններ**

1. Բազիլիկ
2. Պանո
3. Վանիտաս
4. Դիպտիխ

**41** **Աշխատանքի զրագետ վերլուծության համար առաջնահերթ ինչպիսի կարողություններ պետք է զարգացնել**

1. Հուզազգայական արտահայտում
2. Տեսողական ընկալում
3. Վերլուծական մտածողություն
4. Հաղորդակցական կարողություն

**42** **Ինչպես են միջազգային տերմինով թարգմանաբար կոչվում մարտանկարիչները**

1. Դաղահստ
2. Բատալիստ
3. Ֆովիստ
4. Տաշիստ

**43** **Ով է Երևանի Խ. Աբովյանի անվան պուրակում տեղադրված Խ. Աբովյանի հուշարձանի հեղինակը**

1. Սուրեն Ստեփանյան
2. Արա Հարությունյան
3. Գետիկ Բաղդասարյան
4. Յուրա Մինասյան

**44** **Ինչպես է անվանվում կենցաղային իրերի, թափոնի և տարբեր նյութերի համադրությամբ տեխնիկան կերպարվեստում**

1. Մոնոտիպիա
2. Էստամպ
3. Կոլաժ
4. Օֆորտ

**45** **Ով է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» գրքի նկարազարդման հեղինակը (1963-1965 թթ.)**

1. Լևոն Մանասերյան
2. Գրիգոր Խանջյան
3. Հակոբ Կոջոյան
4. Մինաս Ավետիսյան

**46** **Նշվածներից որն է համարվում ուսումնական խնդիր**

1. Երևակայության զարգացում
2. Բնօրինակից նկարչություն
3. Տարածության արտահայտում
4. Կարողությունների ձևավորում

**47** **Ով է «Մտածողը» բրոնզաձույլ ստեղծագործության հեղինակը**

1. Արիստիդ Մայոլ
2. Էմիլ Բուրդել
3. Օգյուստ Ռոդեն
4. Ժան Կարպո

48 **Աշակերտների մոտ կերպարվեստային գործունեության ինչպիսի ընդունակությունների զարգացումն է ապահովում ինքնուրույն ստեղծագործական գործունեություն**

1. Իրապաշտական վերարտադրություն
2. Ստեղծագործական ընկալում
3. Գեղագիտական պահանջմունք
4. Ջննողական վերաբերմունք

49 **Ով է Գյումրի քաղաքի «Մայր Հայաստան» հուշարձանի հեղինակը**

1. Տարիել Հակոբյան
2. Արա Սարգսյան
3. Ղուկաս Չուբարյան
4. Արշամ Շահինան

50 **Առաջադրանքներ կազմելիս որը չի համարվում կարևորագույն գործոն**

1. Առաջադրանքի թեմա
2. Առաջադրանքի չափ
3. Առաջադրանքի խնդիր
4. Առաջադրանքի տեսակ

51 **Որ ճարտարապետն է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի հեղինակը**

1. Ռաֆայել Իսրայելյան
2. Թորոս Թորամանյան
3. Մարկ Գրիգորյան
4. Արթուր Մեսչյան

52 **Կերպարվեստի դասավանդման գործընթացում մանկավարժի գործնական ցուցադրումը օգնում է**

1. Աշակերտներին զերծ պահել սխալներից
2. Աշակերտներին սովորեցնել ճաշակ
3. Աշակերտներին ցուցադրել մեթոդները
4. Աշակերտներին ուղղորդել ընդօրինակել

**53** Ով է հին հունական դիցաբանության պանթեոնի օվկիանոսների աստվածը, ում նաև անվանում էին «Ծովի Աստված»

1. Պոսեյդոն
2. Զևս
3. Հերմես
4. Ապոլլոն

**54** Ըստ առարկայական չափորոշչի և ծրագրի, նշվածներից որը ուսումնական գործընթացի տեսակ չէ

1. Խաղային գործունեություն
2. Խմբային գործունեություն
3. Անհատական գործունեություն
4. Պատկերագրական գործունեություն

**55** Որ գեղանկարչի վրձնին է պատկանում «Իվան Ահեղն ու նրա որդի Իվանը» կտավը:

1. Իլյա Ռեպին
2. Վալենտին Սերով
3. Վասիլի Պոլենով
4. Իսահակ Լևիտան

**56** Նշվածներից որը սովորողներին ներկայացվող պահանջների մակարդակ չէ

1. Առավելագույն մակարդակ
2. Նվազագույն մակարդակ
3. Միջին մակարդակ
4. Հիմնական մակարդակ

**57** Որ դարի աշխատանք է համարվում Գառնու տարածքի բաղնիքի խճանկար Հատակը

1. 4-րդ դար
2. 1-ին դար
3. 2-րդ դար
4. 3-րդ դար

**58** **Ուսումնական նյութի ուսումնասիրությունը սովորողների համար հնարավորություն կընձեռի**

1. Ձևավորել գիտելիքները ինքնուրույն կիրառելու մոտեցումներ
2. Ինքնուրույն արտահայտել չափորոշիչային վերջնարդյունքները
3. Զարգացնել ինքնուրույն գործունեություն իրականացնելու կարողությունները
4. Ինքնուրույն կազմակերպել սեփական ուսումնական գործընթացը

**59** **Որն է դիդակտիկ նյութի կիրառման հիմնական նպատակը**

1. Երևակայական մտածելակերպի զարգացում
2. Տեղեկատվության այլընտրանքային աղբյուր
3. Աշակերտների գիտելիքների ստուգում
4. Ուսումնառությունը պլանավորելու գործոն

**60** **Որը չի համարվում ուսումնական գործընթացի պարտադիր պլանավորման գործոն**

1. Արտադպրոցական պարապունքներ
2. Տարվա օրացուցային պլան
3. Դասի պլան կոնսպեկտ
4. Առարկայական ծրագիր

**61** **Որը չի հանդիսանում պուրակներում տեղադրված քանդակների նպատակ**

1. Կիրառական
2. Ճանաչողական
3. Գեղագիտական
4. Դաստիարակչական

**62** **Որն է համարվում Մարտիրոս Սարյանի առաջին շրջանը**

1. Վերացական պատկերներ
2. Արևելյան տեսարաններ
3. Երազներ և հեքիաթներ
4. Հայկական բնաշխարհ

**63** **Հանրակրթական դպրոցում նշվածներից որն է համարվում կերպարվեստի դասավանդման տեսակ**

1. Երևակայության զարգացում
2. Կարողությունների ձևավորում
3. Տարածության արտահայտում
4. Բնօրինակից նկարչություն

**64** **Համապատասխանեցնել նշված արվեստագետներին ըստ իրենց գեղանկարչական ուղղությունների**

1. Վինսենթ վան Գոգ
2. Ժորժ Սյորա
3. Պոլ Սեզան
4. Անրի Մատիս

Էքսպրեսիոնիզմ ☐
Պուանտելիզմ ☐
Կուբիզմ ☐
Ֆովիզմ ☐

**65** **Նշված տերմինները համապատասխանեցրեք իրենց բնութագրերին**

1. Էսքիզ
2. Ռեֆլեքս
3. Գրիզայլ
4. Պլեներ

Գեղարվեստական ստեղծագործության նախանկար ☐
Առարկայի վրա լույսի անդրադարձում ☐
Բացօթյա նկարչություն ☐
Մեկ գույնի տարբեր երանգներով կատարված աշխատանք ☐

**66** **Համապատասխանացնել հեղինակներին ըստ իրենց հիմնադրած ժանրերի հայ կերպարվեստում**

1. Զաքար Զաքարյան
2. Վարդգես Սուրենյանց
3. Հակոբ Հովնաթանյան
4. Գևորգ Բաշինջաղյան

Դիմանկարի ժանր ☐
Նատյուրմորտի ժանր ☐
Բնանկարի ժանր ☐
Պատմական ժանր ☐

| 67 | **Որ հայ նկարչի կեղծանունն է համապատասխանում նշված անուն ազգանունների** |
|---|---|

1. Գևորգ Գրիգորյան
2. Ռստանիկ Աղոյան
3. Գառնիկ Զուլումյան
4. Հովհաննես Սեմերջյան

Ջոտտո ☐
Արշիլ Գորկի ☐
Ժանսեմ ☐
Գառզու ☐

| 68 | **Գտնել համընկումները** |
|---|---|

1. Գունավոր քարերով պատկերված ստեղծագործություն
2. Գունավոր, թափանցիկ ապակու կտորներով հորինվածք
3. Ձեռքով գործված ստեղծագործություն
4. Գործվածքի վրա հատուկ նյութերով նկարված ստեղծագործություն

Վիտրաժ ☐
Բատիկ ☐
Խճանկար ☐
Գոբելեն ☐

| 69 | **Համապատասխանեցնել գրքերի նկարազարդման հեղինակներին ըստ իրենց աշխատանքների:** |
|---|---|

1. Գրիգոր Խանջյան
2. Արա Բեքարյան
3. Հակոբ Կոջոյան
4. Մարտիրոս Սարյան

Խաչատուր Աբովյան «Վերք Հայաստանի» ☐
Եղիշե Չարենց «Երկիր Նաիրի» ☐
Ստեփան Զորյան «Հազարան բլբուլ» ☐
Ավետիք Իսահակյան «Աբու-լալա Մահարի» ☐

**70** **Համապատասխանեցնել վերածնունդի շրջանի ստեղծագործությունները ըստ իրենց գտնվելու վայրի**

1. Սանդրո Բոտիչելլի «Գարուն»
2. Ռաֆայել Սանտի «Սիքստինյան Տիրամայր»
3. Լեոնարդո դա Վինչի «Տիրամայր Լիտտա»
4. Միքելանջելո Բուոնարոտի «Դավիթ»

Դրեզդենի հին վարպետների պատկերասրահ ☐
Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժ թանգարան ☐
Ֆլորենցիայի գեղարվեստի ակադեմիա ☐
Ֆլորենցիայի Ուֆֆիցի պատկերասրահ ☐